

# ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Ամէն մեծագոյն շինուածք երկար ժամանակի ընթացքին կարող է անհետանալ, բայց բարի անունը՝ բնաւ չի կորսուիր: Նախընտրելի է մեռնիլ բարի անունով, քան թէ ապրիլ վատ համբաւով: Ով որ աշխարհի վրայ բարի համբաւ կը ձգէ՝ մահէն ետք ալ կենդանի կը մնայ, իսկ վատահամբաւը իր կեանքին մէջ մեռած է՝ եթէ նոյնիսկ երկար տարիներ ապրի:

Կատարեալն ու պատուաւորը այն անձը չէ՝ որ կատարելութեան համբաւ ու պատիւ ունի, այլ ան՝ որ իր մէջ կատարելութիւն ու պատիւի արժանաւորութիւն: Որովհետեւ կան շատեր, որ կատարելութեան համբաւ ու պատիւ չունին, բայց իրենց մէջ ունին կատարելութիւն ու պատիւի արժանաւորութիւն: Աւելի լաւ է կատարեալ ու պատուաւոր ըլլալ, քան թէ կատարելութեան համբաւ ու պատիւ ունենալ:

Պատիւը ծուխի նման է եւ ով որ գայն կը հետապնդէ, անոր աչքերէն արցունքը չի պակսիր:

Պէտք է ջանալ գովեստի արժանի ըլլալու եւ փախչիլ՝ գովեստ լսելէ:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

### ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

**Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:**

Հագիւ կը սկսիմ աղօթել, անմիջապէս վիճակս կը վատթարանայ, ջերմութիւնս կը բարձրանայ եւ կարծես օդի պակաս կը զգամ: Յաճախ մահամերձ կը դառնամ: Շատ կը վախնամ այդ ահաւոր հիւանդութենէն, որ արագօրէն կը ծանրանայ եւ վայրկեանի մը մէջ կ'անհետանայ: Քրոջս ալ անհասկնալի բան մը կը կատարուի: Այն վիճակին հասեր է, որ կը քալէ, բայց որեւէ բան չի տեսներ ու չ'զգար: Փորձանք մը պիտի գայ գլխուն...»:

Կը տեսնէ՞ք, թէ այդ մեղքը ո՛ւր կը հասցնէ շատ մը ընտանիքներ եւ անոնց սերունդները: Վախով ու հիասթափութեամբ լեցուն ուրիշ նամակ մը եւս ներկայացնենք, եւ այս նիւթը աւարտենք: Կը կարծեմ որ բոլորին համար արդէն յստակ է, որ գուշակութեան, կախարդութեան եւ այլ միջոցներով է որ մարդս Սատանային հետ կապի մէջ կը մտնէ:

«Ջղային համակարգիս ցնցումը ա՛յնքան ծանր է, որ ինձի կը թուի՝ թէ պիտի խելագարիմ: Մանուկ հասակիս յաճախ կը հիւանդանայի, եւ մայրս զիս կը տանէր հմայողներու քով: Հետը լրջօրէն խօսեր եմ այս մասին, եւ ինք կ'ընդունի իր մեղքը: Միայն արտաքնապէս է որ աւելի «ջերմ» դարձեր է:

Տանջանքներս տեսնելով...

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**



## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՂՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՂՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 4 ՆՈՅՆՍԻՔԵՐ, 2012

ԹԻԻ 45

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8.17-21**

**Չկայ ծածուկ բան մը որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը՝ որ չգիտցուի եւ երեւան չգայ: Ուրեմն ուշադիր եղէ՛ք թէ ինչպէ՞ս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ունի:**

**Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խուռն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ ու եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել»:**

**Յիսուս ըսաւ. «Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:**

### «Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը

#### ԿԸ ԼՍԵՆ ԵՒ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԵՆ»:

Վստահաբար մեզմէ իւրաքանչիւրին փափաքն է ըլլալ եղբայր Քրիստոսի: Միրելիներ կարեւորը կամենալն է. եթէ կ'ուզենք Քրիստոսի եղբայրներ ըլլալ, իր կամքը պէտք է կատարենք, ականջ պէտք է տանք Աստուծոյ ձայնը լսելու աղօթքի ճամբով: Աստուծոյ ձայնը լսելու համար պէտք է լաւապէս ճանչնանք զԱստուած Աստուածաշունչին ընդմէջէն: Աստուածաշունչը մեր ամէնօրեայ հոգեւոր սնունդի աղբիւր դարձնենք, մենք՝ որ բոլորս անոր ծարար ունինք: Կարդանք, սնանինք, այն ատեն պիտի լսենք եւ գործադրենք այն ինչ՝ որ կը պատգամէ մեզի Քրիստոս:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑՆ՝ ՍՏԵՓԱՆՈՍԻ  
ՀՈՍՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ  
ՋԱՀԱՆԱՅԻՑՆ ԵՒ  
ՍԱՐԿԱՒԱԳԱՅՆ ԵՒ  
ԺՈՂՈՎՐԴՈՅՆ

Յորդ դարուն Հոռոմի մէջ ապրած քաջ առաջնորդ եղած է Ստեփանոս Հոռոմայ հայրապետը: 254 թուականին կը բարձրանայ Հոռոմի աթոռին վրայ եւ կը գահակալէ մինչեւ իր նահատակութիւնը՝ 257 թուական:

Ստեփանոս Հայրապետ եղած է իր հօտը պաշտպանող եւ քաջալերող հոգեւորական մը: Ան նոյնիսկ դարձի կը բերէ եւ քրիստոնեայ կը մկրտէ Նեմեսիոս անունով հեթանոս իշխան մը եւ անոր կոյր դուստրը, որ մկրտուելէն ետք կը բժշկուի եւ աչքերը կը բացուին: Իշխանը նոյնիսկ սարկաւազ կը ձեռնադրուի եւ սակայն իր ունեցած հաստատ հաւատքին համար կը նահատակուի կայսեր կողմէ: Այսպիսով Ստեփանոս հայրապետի գահակալութեան շրջանին բազմաթիւ հոգեւորականներ եւ հաւատացեալներ կը նահատակուին Հոռոմի մէջ:

Օր մը, երբ Ստեփանոս Հայրապետ Ս. եւ Անմահ պատարագ կը մատուցէր, յանկարծ զինուորներ կը պաշարեն եկեղեցին եւ կը փորձեն խորտակել դուռը եւ ներս մտնել: Այն պահուն երբ Ս. Հայրապետը կը հաղորդուի եւ կը հաղորդէ ժողովուրդը, զինուորները ներս խուժելով կը նահատակեն զինք իր արիւնը խառնելով Ս. Հաղորդութեան սկիհին մէջ գտնուող Քրիստոսի սուրբ արեան: Հաւատացեալներ պատուով կը թաղեն զայն: Ծրդ դարուն ածիւնները կը փոխադրուին իր անունը կրող վանքի մը մէջ եւ այնտեղ կը հանգչի ան այսօր:

## ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

### ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ ՈՒՐԿԷ՞ ԿԸ ԲԽԻ:

Ընտանիքի մը երջանկութիւնը կը բխի այր եւ կնոջ փոխադարձ սէրէն եւ հաւատարմութենէն: Սիրոյ աղբիւրը Աստուած է, քանզի «Աստուած սէր է, եւ ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի ու Աստուած՝ անոր մէջ» (Ա. Յովհ. Դ.16):

Առանց սիրոյ տիրապետութեան ընտանիքի մը միութիւնը կը խախտի: Փոխադարձ սէրը վստահութիւն կը ներշնչէ այր եւ կնոջ: Սիրոյ ներկայութեան կ'անհետանան նախանձը, գոռոզութիւնը, հպարտութիւնը, անվայել վարմունքը, անձնասիրութիւնը, գրգռութիւնը, չարութիւնը եւ անիրաւութիւնը: Սէր եղած տեղը կը զօրանայ հաւատքը եւ կը շողայ յոյսը՝ փոխադարձ գիշողութեամբ, համբերութեամբ եւ երկայնամտութեամբ (Ա. Կորթ. ԺԳ.4-7): Սէրը կը ծածկէ մեղքերու բազմութիւնը եւ կը դառնայ երաշխիք խաղաղութեան (Ա. Պետ. Դ.8): Սիրոյ շնորհիւ կը ծաղկի ընտանիքը եւ կը վայելէ Աստուծոյ օրհնութիւնը:

Պօղոս առաքեալ եկեղեցիներուն ուղղած իր թողութիւններուն մէջ հաւատացեալներուն կ'ըսէ. «Ձեր ամէն բաները սիրով ըլլան» (Ա. Կորթ. ԺԶ.14): «Սիրով ծառայեցէ՛ք իրարու» (Գաղ. Ե.13): «Աստուծոյ ընտրեալ սուրբերու եւ սիրելիներու պէս ձեր վրայ հագէ՛ք գութը, ողորմութիւնը, հեզութիւնը, երկայնամտութիւնը, իրարու համբերելով եւ իրարու ներելով՝ եթէ մէկը միւսին դէմ տրտունջ ունենայ. ինչպէս Քրիստոս ձեզի ներեց, դուք ալ նոյնը ըրէ՛ք, եւ այս ամէն բաներու վրայ սէրը հագէ՛ք, որ կատարելութեան կապն է» (Կող. Գ.12-14):

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ՄԻՐՈՅ ՄԱՍԻՆ

Սիրոյ մասերը այնքան շատ են, որ միայն քիչը պիտի յիշեն: Առաջին եւ մեծագոյնը՝ ծնողքը սիրելն է, ինչպէս որ գրուած է օրէնքին մէջ. «Պատու՛ հայրդ ու մայրդ» (Ելք. 20.12): Աստուծմէ ետք ծնունդի պատեալ եւ գործիք են ծնողները եւ որպէս մարմնաւոր աստուածներն են իրենց զաւակներուն, որովհետեւ կը ծնին, կը սնուցանեն եւ կեանքի պատեալ կ'ըլլան: Ծնողներուն ինչ բարիք որ ընենք քիչ է, որովհետեւ շատ բան կը պարտիմք. նոյնիսկ եթէ բոլորը հատուցանենք, Խճչպէս կրնանք փոխարինել այն՝ որ իրենք ծնան մեզ: Արդարեւ, ծնածները չեն կրնար զանոնք ծնիլ, եւ այս ձեւով պարտական կ'ըլլանք: Աստուծոյ օրէնքին մէջ գրուած է. «Ան որ անարգէ հայրը կամ մայրը, մահուամբ թող պատժուի» (Բ. Օրինաց 27 16): Ան որ ծնողքը անարգէ, զԱստուած անարգած կ'ըլլայ. այս մասին Ս. Բարսեղ իր կանոններուն 12-րդ գլխուն մէջ կը գրէ. «Այն զաւակները որոնք չեն պատուեր իրենց ծնողները, նգովուած ըլլան»:

Ոչ միայն գիրքերն ու օրէնքները կը խրատեն ծնողները սիրել, այլ նաեւ անասուններն ու թռչունները բնութեամբ ունին ծնողասիրութիւնը՝ օրինակ, արագիլներու ձագերուն համար կ'ըսեն, թէ երբ իրենց ծնողները ծերանան, անոնց թեւերուն տակ կը մտնեն եւ կ'օգնեն, կը պտտցնեն ու կը կերակրեն: Իսկ երբ չկարենան այլեւս շրջիլ, բոյնին մէջ կը նստցնեն, կերակուր կը բերեն եւ կը սնուցանեն, այնպէս ինչպէս անոնք սնուցած էին իրենց ձագերը:

Արդ, մեծ ամօք է որ մարդիկ թռչուններէն աւելի վատթար գտնուին եւ ծնողաց սնունդն ու բարիքները մոռնան:

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

### ՅԱՐԱՏԵՒԵԼ

Սաղմոսերգուին համար, իր պարզան շատ պարզ է եւ յստակ. «Երկրի վրայ ալ քեզմէ գառ ո՛չ մէկուն կը բաղձամ» (Սաղմ. 73.25): Մեր հոգեւոր կեանքի ամէն տեսակ յառաջդիմութիւնը կը յատկանշուի դէպի մէկ նպատակի եւ կարիքի ձգտումով. «Աստուած՝ Ինք: Հոգեւոր կեանքի մեր բոլոր յառաջդիմութիւնները պէտք է ծառայեն զԱստուած աւելի մօտէն ճանչնալու եւ սիրելու նպատակին, որպէսզի կարենանք Սաղմոսերգուին պէս ըսել. «Աստուած իմ սրտիս զօրութիւնը ու իմ բաժինս է յաւիտեան» (73. 26):

Մեր այդ հեռանկարը կը փոխէ մեր վերաբերմունքը ամէն բանի հանդէպ: Տառապանք եւ նեղութիւն կը դառնան միջոցներ՝ Աստուծոյ հանդէպ մեր ծարաւը յագեցնելու: Յուսախաբուութիւններ կը վերածուին միջոցներու, մեզ հետզհետէ հեռացնելով երկրային զբաղումներէ՝ աւելի Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մը նախընտրելու համար: Նոյնիսկ մեղքը, ապաշխարութեան փորձառութիւնէն ետք, մեզ Աստուծոյ աւելի մօտեցնելու ազդակի մը կը վերածուի, որպէսզի Անոր սէրն ու ներողամտութիւնը մօտէն զգանք: Բոլոր բաները բարիին գործակից կը դառնան, երբ մեր նպատակը բարձրագոյն բարութեան՝ Աստուծոյ մօտենալու համար է:

Առաքեալին պէս, մենք ալ կրնանք ըսել. «Հետամուտ եմ բռնելու զայն, որուն համար ալ բռնուեցայ Քրիստոսի Յիսուսէ» (Փիլիպ. 3.12): Ի՞նչ բանէ մղուած յառաջ կ'ընթանանք մեր հոգեւոր կեանքին մէջ: Պէտք է խոնարհաբար եւ երախտագիտութեամբ փոխադարձենք Անոր սիրոյն: Բայց ամէն բան կը սկսի Աստուծմով: Ինքն է, որ կը փնտռէ մեզ, որպէսզի մենք ալ փնտռենք Զինք:

Աստուած մեզ այնքան շատ կը սիրէ, անոր համար չ'ուզեր, որ մնանք այնպէս՝ ինչպէս որ ենք:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ

22.15-25

Այսպէս կ'ըսէ Տէրը, Երկնային Զօր-  
ֆերու Տէրը.- Գնա՛ արքունի հազարա-  
պետ Սոմնասի դիւանը մտի՛ր եւ ըսէ՛  
իրեն.-

Ինչո՞ւ հոս եկած ես, ի՞նչ գործ ունիս  
հոս, որ այստեղ քեզի գերեզման փորել  
կու տաս, այս բարձունքին վրայ քեզի  
ժայռափոր դամբարան կը շինես:

Լսէ՛, ո՛վ մարդ, Երկնաւոր Զօրֆերու  
Տէրը քեզ այդ տեղէն պիտի հանէ եւ  
քաշկոտելով դուրս նետէ. պիտի առնէ  
քեզմէ պատմունանդ եւ փառքի պսակդ,  
քեզ մեծ եւ անսահման երկիր մը պիտի  
նետէ եւ հոն պիտի մեռնիս: Քու գեղեցիկ  
կառքդ անարգանքի առարկայ պիտի ըլլայ  
եւ իշխանական տունդ՝ ոտքի կոխան:

Աստուած քեզ քու պաշտօնէդ եւ քու  
դիրքէդ պիտի հեռացնէ:

Այն օրը պիտի կանչեմ իմ ծառաս,  
Քեղկիայի որդի Եղիակիմը, եւ քու պատ-  
մունանդ անոր պիտի հագցնեմ, անոր  
պիտի տամ քու իշխանական պսակդ, եւ  
անոր պիտի յանձնեմ արքունի հազարա-  
պետութիւնը, որպէսզի հօր մը պէս կա-  
ռավարէ Երուսաղէմի եւ Յուդայի բնա-  
կիչները:

Դաւիթի տան վերակացութիւնը անոր  
պիտի տամ. պիտի իշխէ, եւ ո՛չ ոք պիտի  
ընդդիմանայ անոր: Իր վնիւնները բացար-  
ձակ պիտի ըլլան. ո՛չ ոք պիտի կարենայ  
փակել ինչ որ ինք կը բանայ, եւ ո՛չ ոք  
պիտի կարենայ բանալ ինչ որ ինք կը փա-  
կէ:

Զայն իշխան պիտի կարգեմ եւ ամ-  
բօրէն հաստատեմ պատին ամրացուած  
գամի մը պէս, եւ անիկա իր հօրը տան  
փառքը պիտի ըլլայ:

**Շարունակել  
Աստուածաշունչէն**

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԵՓԵՍՍՑԻՆԵՐՈՒՆ

1.1-14

Ես, Պօղոս, Աստուծոյ կամֆով Յի-  
սուս Քրիստոսի առաքեալը, կը գրեմ  
Եփեսոս բնակող եղբայրներուդ, Յի-  
սուս Քրիստոսի հաւատացողներուդ:  
Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յի-  
սուս Քրիստոս շնորհք եւ խաղաղու-  
թիւն պարգեւեն ձեզի:

Օրհնեալ է Աստուած, մեր Տիրոջ  
Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիս-  
տոսով մեզ օրհնեց երկինքի մէջ ամէն  
տեսակի հոգեւոր օրհնութեամբ: Անի-  
կա աշխարհի գոյութենէն իսկ առաջ  
մեզ ընտրած էր՝ Քրիստոսի միջոցաւ  
իրեն պատկանելու համար որպէս  
սուրբ եւ անարատ ժողովուրդ, եւ իր  
սիրով մեզ նախասահմանեց Յիսուս  
Քրիստոսի ձեռքով իր որդիները ըլլա-  
լու, որովհետեւ ա՛յդ էր իր կամքը եւ  
ծրագիրը:

Ուստի գովեմք զինք այն փառքին  
համար որ մեզի շնորհեց իր սիրելի  
Որդիին միջոցաւ: Արդարեւ, ան՛ով  
փրկուեցանք եւ անոր արիւնով մեր  
մեղքերուն թողութիւն գտանք: Ո՛րքան  
մեծ է իր շնորհքը որ առատօրէն  
տուաւ մեզի՝ ամենայն իմաստութեամբ  
եւ գիտութեամբ: Որովհետեւ իր կամ-  
քին համաձայն մեզի յայտնեց շատ  
կանուխէն պատրաստ իր ծրագիրը, որ  
Քրիստոսով պիտի իրագործուի: Եւ  
այդ ծրագիրը սա է, որ երբ ժամանակ-  
ները իրենց լրումին հասնին, Քրիս-  
տոս իրմով պիտի բովանդակէ ամէն  
ինչ որ կայ երկինքի մէջ եւ երկրի  
վրայ:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՄՍՏՈՒՄՇԱՇՈՒՄՆԵՐԸ**